

զարդարուած պարսիկ գորգերով, ուր տեղ ժողովուրդը կը զուարճանար խաղերու տեսարաններով: Ըն խաղացողներէն ոմանք վրանին սակաւագիւտ կենդանեաց մորթեր աւած էին, ինչ պէս յովազի, վազրի, փղի, և այլն. ոմանք ալ՝ հրեշտակի, վհուկի, և ուրիշ ասոնց նման կերպարանքներ առած. սակայն ամենէն աւելի ճոխ էր սեղանին պերճութիւնը, որուն բոլոր սպասն ալ ոսկիէ էր: Բմպելիներն էին ծաղկահոտ պինի, ազնիւ օշարակ ու օղի. անոնց համեմատ զանազան համադամ կերակուրներ, դաշտին երեսը ծածկուած էր սեղանով, որ անարգել կրնար վայելել ուզողը:

Երոյն ատենը թագաւորը հրաման հանեց որ ամէն վէճ՝ ու դատաստան արգելուի աս ուրախութեան ժամանակը. հարուստը չյանդգնի իշխանութիւն բանեցընելու աղքատաց վրայ, կամ զօրաւորը տկարին. ոչ ոք կարող ըլլայ հաշիւ պահանջել մէկայէն: Հարունիքը լմրնալէն վերջը, հարսնբուրբըր ու բոլոր տէրութեան մեծամեծները՝ եօթն անգամ հարսին ու փեսին վրայ ադամանդ, մարգարիտ ու յակինթ քարեր սփռեցին: — Իսկ անհամար բազմութիւնն կանթեղներու ու ջահերու կը ձևացընէին մէկ պայծառ օր մը, գիշերուան խաւարը փարատելով: Հանդէսը լմրնալէն վերջը, ինքնակալը հրամայեց որ ամէնքը իրենց տեղերնին դառնան, ու իրենց բաներուն գործքերուն հետ ըլլան: Ինքն ալ իր բնակութիւնը դառնալով, սկսաւ տէրութեան կառավարութիւնը նորէն ձեռք առնել:

Իսահմազ ¹⁾ ուրին ալ իր աշխարհակալութեան ատեն անբաւ անգին գանձեր ժողովեց, որոնց մէջ շատ նշանաւոր է հնդկաստանէն առած դահն, որ 10 ոտք բարձրութիւն ունէր, 6 ոտք լայնութիւն, 8 սիւնակով որ բոլոր ադամանդներով և մարգարտով հագուցած էր, նստարանն ալ զմրխտով և յակինթով բանած. վրան երկու սիրամարգ կար, որոնց բնական գոյներն ձևացուցած էր նոյն գունով անգին քարե-

րով, տտան փետուրներուն ծայրերէն ալ մէկմէկ մեծ զմրուխտներ կախուած էին: Ուրիշ վեց գահ ալ ունէր ասկէ քիչ պակաս ծանրադին. նոյնպէս էին վրաններն ալ, ոսկեթել և մարգարտով ու գոհարներով բանած:

Հին պատմութեանց մէջ կը յիշուին ասոնցմէ աւելի պերճ կամ շոյլ կամ հարուստ մարդիկ, և մեծագործ շինուածք. բայց ամենէն հարուստն էին Բմբրիկոյ մէջ Փերուի գանձերն. արեգական տաճարն բոլոր ոսկի թիթեղներով պատած էր, վրան ալ քարեր հագուցած. ոսկեջուր թափող աղբիւրներ և ոսկեծաղիկ ծառեր կային մէջը. իսկ արեգական պատկերին պայծառութիւնը նայողին աչքը կ'առնէր: Քուզքոյի պարտէզին մէջ ալ ոսկեղէն ծառեր ու ծաղկերներ, անասուններ ու գործիքներ կային. քաղքին Ընթապալիփա թագաւորը խոտապաւ Փիցաոյ Սարանիացի զօրավարին որ կեանքը խալըսընելու համար՝ իրեն ոսկիէ ամաններ տայ որչափ կ'առնէր սենեակն ուր որ կեցեր էին, կամ ուրիշներուն ըսածին նայելով՝ բոլոր պալատին սրահը լեցընէ ոսկեղէնով ինչուան ուր որ մարդու մը ձեռք հասնի. բայց Փիցաոյ յանձն չառաւ, և քաղաքը աւարի տալով՝ ալ աւելի ոսկի գտաւ:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆԲԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հողային ածուխներ:

ԹԻԳԵՏ և ուրիշ անգամ օրագրիս մէջ հանքային ածուխի վրայ տեղեկութիւն տուեր ենք՝, բայց ասնիւթս տընտեսութեան մէջ օրէ օր աւելի օգտակար ըլլալուն համար, անոր հողային տեսակներուն վրայ ալ կ'ուզենք խօսիլ, որ իրեք գլխաւոր տեսակ ունի.

1 Հատ. Գ. 258: Ե. 112:

Իւղային կամ Պարարտ , Չոր կամ Հաւ
մաք , և Խիտ :

Իւղային ածուխ : Իւղային ածուխը
փայլուն սև գոյն մը ունի և դիւրաւ կը
վառի . աս ածուխին մէկ խորանարդ
ռոնաչափը 91 լիպրէ կամ 45 քիլոկրամ
կուգայ . վառելու ժամանակ կ'ուռի ,
կը կակըղնայ , ու հալելով ամէն կտոր
ները մէկտեղ կը միանան և մէկ ամ
բողջ զանգուած մը կը ձևոնան . որ
պէտք է կտորրտել , որպէս զի մէջը օդ
բանի և կրակը բոլորովին չմարի : Իւ
ղային ածուխը իրեն աս յատկութեանը
համար ցողացիկ հնոցներու՝ մէջ գոր
ծածելու շատ յարմար է . վասն զի վան
դակին կամ կասկարային վրայ դնելով՝
վանդակին ծակերէն թէ տաքութեա
նը մէկ մասը վար կը զարնէ , և թէ ա
ծուխը կը թափթրի . իսկ դարբիննե
րու հնոցին մէջ գործածելու շատ աղէկ
կուգայ ու մեծ օգուտ ունի . վասն զի
աս հնոցին ձեւը տարբեր է առջինէն ,
և ածուխը փչելու խողովակին դիմացը
գմբէթի պէս դիզուած խիստ աղէկ կը
վառի , ու տաքընելու երկաթը անոր
մէջը խոթելու և հանելու ատեն չփր
չիր . աս պատճառաւ բետոագործնե
րուն շատ աղէկ է : Իւղային ածուխին
բոցը ճերմակ ու երկայն է , ջերմու
թիւնը խիստ սաստիկ , ծուխն ալ սև
ու առատ , բայց աւելի անուշահոտ է
քան թէ գարշահոտ : Իս ածուխին
ճեղքերուն մէջ եղած փայլուն թեր
թերը կամ թելերը՝ ամենէն աւելի ե
ղատ մասունքներն են , որոնց մէջ վա
ռելու հիւթ ուրիշ կտորներէն շատ ա
ւելի կը գտնուի . և վառելէն վերջը ա
մենէն քիչ մոխիր կամ դիւրաւ ձգողները
նոյն երակներն են . ընդհակառակն ան
կտորներն որ աւելի հողի գոյն ունին՝
շատ դիւրաւ կը ձգեն . վասն զի անոնց
մէջ հողի մասունք ու կարով զանգուած
հերձաքարի կտորտուք շատ կայ : Իս
ածուխը աւելի կոպիճի և հերձաքա

1 Fourneau à réverbère. 3 ցողացիկ կ'ըսուի ան
հնոց որուն վրայ գմբէթով մը ծածկած է . և տա
քութիւնը գմբէթին զարնելով նորէն վար կը
դառնայ :

րի կարգերով ձեւացած երկիրներու մէջ
կը գտնուի . ուր նոյն քարերուն երեսին
վրայ նաև բուսոց պատկերներ խիստ
շատ կան՝ աղէկ տպաւորուած ու մնա
ցած :

Իւղային ածուխին մէջ շատ տեսակ
վառելի նիւթեր կան , բայց ամէնքն ալ
նոյն միջոցին չեն բռնկիր , հապա երկու
կը բաժնուին , մէկը առաջ մէկալը ետ
քը կը վառի : Իւղային ածուխը կրակ
բռնելուն պէս՝ ամենէն առաջ մէջի
կուպրը կը վառի , և աս է որ բոց ու
ծուխ կը հանէ ամմոնիաքին ու ծծում
բին հետ , որ սովորաբար միշտ կը գրտ
նուին իւղային ածուխին մէջ . իսկ ած
խային մասունքը ինչուան որ բոցը բո
լորովին չիջնայ՝ չեն վառիր : Իւղային
ածուխին հոտին գլխաւոր պատճառը
կուպրը , ծծումբն ու ամմոնիաքն է , և
աս կուպրէն ու ամմոնիաքէն կ'ելլէ ած
խուտ ջրածինը , և լուսաւորութեան
կը գործածուի , որուն համար մեծա
մեծ գործիքներ շինուած են , և Չերմա
լահ՝ կ'ըսուին , որ պարոն Լ բպոն Պաղ
ղիացի ճարտարապետը հնարած է ,
բայց Լնգղիացիք գործիքին աւելի կա
տարելութիւն տուած ըլլալով՝ գիւտն
ալ իրենց կը սեպհականեն :

Իւղային ածուխին ան մասը որ ա
ռանց բոց , ծուխ ու հոտ հանելու կը
վառի , անգղիարէն 1 2 կ'ըսուի . որ
թեթեւ նիւթ մըն է և խիստ շատ ծակ
տիք ունի , շփուելով կամ զարնելով ձայն
կը հանէ , մոխրագոյն է և կարծես թէ
վրան փայլուն նիւթով մը օծած : Վո
քը թէ որ կամաց կամաց ինքիրեն՝ կամ
բարակ կերպով մը փչելով վառի , փո
շի պէս կարմրագոյն մոխիր մը կը թո
ղու . բայց թէ որ սաստիկ փչելով ար
ծարծելու ըլլաս՝ մոխրի տեղ հողային
նիւթոց մանրուք կը թողու . վասն զի
մէջի վառելի նիւթերը մէկէն կը բռն
կին ու կ'անցնին , իսկ հողային մա
սունքը չեն կրնար այրիլ : Իսուն քո
քը առանց ծուխ և հոտ հանելու կ'այ
րի , և ուրիշ մարմնոց հետ չկրպչիր . աս

1 Thermolampe. 2 Coke կամ Coake.

բանիս համար շատ յարմար է ան տեսակ հնոցներու մէջ գործածելու ուր որ քոքին հետ խառն կը դնեն մետաղները :

Փոշի դարձած հանքային ածուխով շինուած քոքը այնչափ աղէկ չէ , որչափ ածուխի մեծ կտորներէն , հանուած քոքը . և աս երկու տեսակ քոքերուն մէջ իրարմէ տարբեր նիւթեր ալ կը գրտնուին . այսինքն մեծ կտորներէն հանած քոքին մէջ կայ զուտ ածուխ , ծրծումք , և հողային նիւթերու դիրտ . փոշիով շինուածին մէջ կայ զուտ ածուխ , երկրթի դբսիտ , կիր , զուտ պաղլեղ , գայլախաղ :

Ըս վերջի տեսակ քոքը երկաթ հալեցրնելու ատեն պէտք չէ գործածել , վասն զի մէջի կիրը արգելք կ'ընէ , և գործողութիւնը չյաջողիր :

Չոր կամ ցամաք ածուխ : Չոր կամ ցամաք ածուխը իւղային ածուխէն աւելի ծանր ու աւելի պինդ է , և անկէ աւելի դժուար կը կտորի . գոյնը սև է , բայց խիստ մութ չէ , կտրուած տեղուանքն ալ փայլուն են . իւղային ածուխէն դժուար կը բռնկի , ու վառելու ժամանակը ամենեւին չուռի , և ոչ երբէք ուրիշ նիւթոց հետ կը կպչի , կապտագոյն և դեղնորակ բոց մը կը հանէ , որ փայտի բոցին կը նմանի , և այրած եղի հոտի նման՝ անախորժ հոտ մը ունի : Ինչ որ չոր ածուխը այրելով ծուխը թորեցրնելու ըլլանք , ընդհանրապէս քիչ կուար կը ձգէ քան թէ իւղային ածուխը . վասն զի չոր ածուխին ճեղքերուն մէջ կուարի փայլուն թերթերը չկան , ինչպէս որ իւղային ածուխին մէջ կը գտնուին հողային նիւթերու հետ :

Ըս ածուխը ընդհանրապէս լեռնելու կամ կրաքարոտ երկիրներու մէջէն կ'ելլէ , ուր որ ժամուներ շատ կը գտնուին . և խիստ քիչ անգամ կ'ըլլայ որ նոյն երկիրներուն մէջ քարերուն վրայ բուսոց պատկերներ տպաւորուած ըլլան : Չոր ածուխէն ելած քոքը ազնիւ չէ . շատ դիրտ կը թողու , և վառելու ատեն քիչ տաքութիւն կուտայ : Ըս ածուխը դարբիններու հնոցներուն

համար այնչափ չյարմարիր . բայց ցուցիկ հնոցներու մէջ գործածելու աղէկ կուգայ , որովհետև անոնց վանդակներուն վրայ աղէկ կը վառի . նաև ապակիի գործատանց փուռերուն համար աղէկ է : չամաք ածուխը՝ որոնց մէջ շատ անգամ հրաքարի կտորուանք կը գտնուին , գէշ յատկութիւն մը ունի որ յանկարծ խոնաւ մթերանոցներու և նոյն իսկ ածխահանքերու մէջ կը բռնկի , ուստի գետնէն հանելէն ետքը այնպիսի տեղուանք երկար ատեն թողուլը խոհեմութիւն չէ : Ըս ընկած ածուխի գէղ մը մարելու համար՝ ապահով կերպը վրան ջուր լեցրնել չէ , հապա մէկէն հրելով գետնի վրայ ձգելու տարածելու է : Ըսնայն կերպով զգուշանալու է որ աս ածուխը թացութիւն չառնէ . ուստի պէտք չէ սաստիկ խոկած վրայէ վրայ դիզել , կամ գոց մթերանոցներու մէջ պահել :

Խիտ ածուխ : Խիտ ածուխը մոխրագոյն սև է . կտրուած տեղուանքը քիչ մը խորտուքորտ և կամ շիտակ կ'ըլլայ . դիւրաւ կը կտորոտի , և աս կտորուանքներէն շատերը խորանարդ ձև ունին . առանց դժուարութեան կը բռնկի , և փայլուն՝ կենդանի ու բարակ բոց մը հանելով կը վառի . քիչ դիրտ կը ձգէ , տաքութիւնն ալ այնչափ սաստիկ չէ : Խիտ ածուխը՝ որուն մէկ խորանարդ ոտնաչափը 80 լիտր կը կշռէ , ամէն տեղ չգտնուիր . Ընգղիոյ Լիւքաւ քաղաքին ածխահանքերուն մէջ իւղային ածուխին հետ մէկտեղ կ'ելլէ : Ըսիկայ լուսաւոր ածուխ՝ ալ կ'ըսուի՝ իր բոցին փայլունութեանը պատճառաւ , այնպէս որ նոյն ածուխը գործածողները անոր լուսովը գիշերը կրնան աշխատիլ : Խիտ ածուխը Ընգղիոյ մէջ նաև Լէնքասթրի դքսութեան՝ ու Խուլանտայի Բիլքէնի դքսութեան մէջէն ալ կ'ելլէ :

1 Charbon-chandelle.

